ԳԱԶԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՍԱԿԱԳՆԵՐԻ ՎԵՐԱՆԱՅՈՒՄ



Գազամատակարարման համակարգի ընկերությունների սակագները հաշվարկվում եւ սահմանվում են «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածով ամրագրված սկզբունքների եւ ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից հաստատված սակագների հաշվարկման մեթոդիկայի հիման վրա:

ՀՀ գազամատակարարման համակարգը

ГАЗПРОМ АРМЕНИЯ

- Բնական գազի ներկրում
- Օպերատիվ տեխնոլոգիական կարգավարում
- Բնական գազի բաշխում եւ վաճառք

ТРАНСГАЗ → Բնական գազի փոխադրում

ՀՀ գազամատակարարման համակարգը

ԳԱԶԱՓՈԽԱԴՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ՝

- շահագործվող գազատարներ՝ 1583,2 կմ,
- գազաբաշխիչ կայաններ՝ 75 հատ,
- չափիչ հանգույցներ՝ 21 հատ,
- ԷՊԿ-ներ՝ 181 հատ,
- գծային փականային հանգույցներ՝ 229 հատ,
- Աբովյանի ԳՍՊԿ՝ 21 ստորգետնյա հորերով:

ԳԱԶԱԲԱՇՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ՝

- շահագործվող գազատարներ՝ 12714,7 կմ,
- գազակարգավորիչ կետեր՝ 2613 հատ,
- միավոր անհատական գազակարգա-վորիչներ՝ 7701 հատ,
- դիսկրետ չափիչ հանգույցներ՝ 1442 հատ,
- ԷՊԿ-ներ՝ 328 հատ,
- բաժանորդների քանակ՝ շուրջ 730 000:

- «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի կողմից գազամատակարարման համակարգի օպերատորի, բաշխման եւ «Տրանսգազ» ՍՊԸ-ի կողմից բնական գազի փոխադրման ծառայությունների մատուցման սակագները վերջին անգամ վերանայվել եւ ուժի մեջ են մտել 2016 թվականի հուլիսի 1-ից:
- «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի կողմից սպառողներին վաճառվող բնական գազի սակագները վերջին անգամ վերանայվել եւ ուժի մեջ են մտել 2017 թվականի հունվարի 1-ից, սակայն նշված վերանայումը պայմանավորված էր միայն «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի գնահատմամբ ընկերությունում այլ աղբյուրներից ձեւավորվող 13.4 մլրդ դրամ լրացուցիչ միջոցներով, որը վերջնական արդյունքում ենթադրում էր բաժնետիրոջ կողմից համապատասխան ֆինանսական միջոցների ներգրավվում: Այդ ժամանակ բնական գազի սակագների հաշվարկներում բնական գազի ներկրման եւ սպառման ծավալները, շահագործման եւ պահպանման ծախսերը, մաշվածությունը, շահույթը եւ այլ ելակետային տվյալներ մնացել են անփոփոխ, քանի որ նախորդ վերանայումից անցել էր ընդամենը 6 ամիս եւ այդ գործոնների էական փոփոխություն տեղի չէր ունեցել:

Գազամատակարարման համակարգի ընկերությունների սակագների 2020 թվականին վերանայման անհրաժեշտությունը

- 2019թ. հունվարի 1-ից ՌԴ-ից ՀՀ ներկրվող բնական գազի գինը ավելացավ 15$/հազ. խմ-ով՝ 150$/հազ. խմ-ի փոխարեն կազմելով 165$/հազ. խմ:
- 2019թ. հունվարի 1-ից «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի բաժնետերն այլևս չստանձնեց բնական գազի գործող սակագներում նախատեսված՝ այլ աղբյուրներից ձևավորվող 13.4 մլրդ դրամ լրացուցիչ ֆինանսական միջոցների ներգրավումը, որը համարժեք է բնական գազի ներկրման գնի 15$/հազ. խմ մեծությանը:
- 2016 թվականից սկսած անցած տարիներին գազամատակարարման համակարգում կատարված ներդրումների փոխհատուցում, ինչպես նաև շահույթի հաշվարկման բազայից սակագների հաշվարկներով կուտակված մաշվածության նվազեցում:
- Շահագործման և պահպանման ծախսերի վերանայման անհրաժեշտություն, սպառման ծավալների աճ և կորուստների նվազում:

Չնայած բնական գազի ներկրման գինն ավելացել է 2019 թվականի հունվարի 1-ից, այնուամենայնիվ, 2019 թվականի ընթացքում հնարավոր եղավ սպառողներին վաճառվող բնական գազի սակագները պահպանել գործող մակարդակում՝ պայմանավորված ընկերությունում շահագործման եւ պահպանման ծախսերի օպտիմալացմամբ եւ ներդրումային ծախսերի կրճատմամբ: Սակայն, նշված գործոնների մի մասն ունեին միանվագ բնույթ եւ 2020 թվականին սպառողներին վաճառվող բնական գազի սակագների վերանայման անհրաժեշտություն առաջացավ, որի արդյունքում «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ն եւ «Տրանսգազ» ՍՊԸ-ն 2020 թվականի ապրիլի 1-ին դիմեցին համապատասխան հայտերով:

- Էներգետիկայի բնագավառում սակագների սահմանման ու վերանայման կարգին համապատասխան «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի եւ «Տրանսգազ» ՍՊԸ-ի սակագների վերանայման հայտերը հանձնաժողովի կողմից ընդունվեցին ուսումնասիրության եւ նույն օրը՝ 2020թ. ապրիլի 2-ին ամբողջությամբ տեղադրվեցին հանձնաժողովի կայքում՝ հնարավորություն ընձեռելով սպառողների շահերը պաշտպանող կազմակերպություններին եւ շահագրգիռ այլ կողմերին ծանոթանալու հայտերին, ներկայացնելու իրենց առաջարկները եւ ստանալու պարզաբանումներ:
- Անցած 2 ամիսների ընթացքում հանձնաժողովի աշխատակազմը մանրամասն ուսումնասիրել է ընկերությունների հայտերով ներկայացված հաշվարկներն ու հիմնավորող փաստաթղթերը, ըստ անհրաժեշտության պահանջել լրացուցիչ հիմնավորումներ եւ արդյունքում կատարել իր հաշվարկները՝ դրանք 2020թ. մայիսի 27-ին տեղադրելով հանձնաժողովի ինտերնետային կայքում եւ նախատեսելով աշխատանքային քննարկում շահագրգիռ կողմերի մասնակցությամբ:
- Աշխատանքային քննարկումը տեղի ունեցավ 2020թ. հունիսի 4-ին՝ «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի, սպառողների շահերը պաշտպանող հասարակական կազմակերպությունների, Հանրային խորհրդի եւ զանգվածային լրատվամիջոցների ներկայացուցիչների մասնակցությամբ: Քննարկմանը ներկայացվեց սակագների վերանայման գործընթացը, այդ թվում՝ հանձնաժողովի աշխատակազմի հաշվարկները, հնչեցին հարցեր և տրվեցին պարզաբանումներ:

Սակագների վերանայման հայտերով ներկայացված եւ ՀԾԿՀ աշխատակազմի կատարած հաշվարկների համեմատական

առանց ԱԱՀ-ի

№	Անվանումներ	Չափի միավոր	"Գազպրոմ Արմենիա" ՓԲԸ-ի հայտ	ՀԾԿՀ աշխատակազմի առաջարկ	Տարբերություն
1	**Անհրաժեշտ հասույթ**	**մլն դրամ**	**234 650.57**	**221 030.24**	**-13 620.33**
1.1	*Ներկրված գազի արժեք*	*մլն դրամ*	*173 760.19*	*173 406.93*	*-353.26*
1.2	*Աշխատավարձ*	*մլն դրամ*	*18 942.50*	*14 663.29*	*-4 279.21*
1.3	*Նորոգման եւ նյութական ծախսեր*	*մլն դրամ*	*11 393.10*	*7 017.52*	*-4 375.58*
1.4	*Այլ ծախսեր*	*մլն դրամ*	*3 434.40*	*2 636.42*	*-797.98*
1.5	*Մաշվածություն եւ շահույթ*	*մլն դրամ*	*29 566.10*	*25 549.27*	*-4 016.83*
1.6	*Անհուսալի դեբիտորական պարտքեր*	*մլն դրամ*	*1 173.30*	*508.37*	*-664.93*
1.7	*Գազի փոխադրումից ստացվող այլ եկամուտ*	*մլն դրամ*	*-3 619.03*	*-2 751.57*	*+867.46*
2	**Բնական գազի ներկրում**	**մլն խմ**	**2 193.94**	**2 189.48**	**-4.46**
	Բնական գազի կորուստներ	*մլն խմ (%)*	*111.20 (5.07%)*	*110.95 (5.07%)*	*-0.25 (0%)*
	Բնական գազի սեփական կարիքներ	*մլն խմ*	10.92	6.71	*-4.21*
3	**Բնական գազի օգտակար առաքում**	**մլն խմ**	**2 071.82**	**2 071.82**	**0.0**
4	**Միադրույթ հաշվարկային սակագին (ներառյալ ԱԱՀ-ն)**	**դր/հազ. խմ**	***135 909.6***	***128 020.70***	**-7 888.90**
		$/հազ. խմ	***283.14***	***266.71***	**-16.43**

Սպառողներին վաճառվող բնական գազի միջին կշռութային սակագնի ձեւավորումն ըստ սպառողական խմբերի սպառման ծավալների ու սակագների

ներառյալ ԱԱՀ-ն

№	Անվանումներ	«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի հայտ		ՀԾԿՀ աշխատակազմի առաջարկ	
		Ծավալ (մլն խմ)	Սակագին	Ծավալ (մլն խմ)	Սակագին
1	**Ընդամենը սպառողներին վաճառվող բնական գազ**	**2 071.82**		**2 071.82**	
1.1	*Բնակչություն (բացի սոցիալապես անապահովների՝ տարեկան մինչև 600 խմ բնական գազի սպառումը)*	*634.51*	*135909.6 դր/հազ. խմ*	*634.51*	*139000.0 դր/հազ. խմ*
1.2	*Սոցիալապես անապահովներ՝ տարեկան մինչև 600 խմ բնական գազի սպառում*	*34.23*	*135909.6 դր/հազ. խմ*	*34.23*	*100000.0 դր/հազ. խմ*
1.3	*Ամսական մինչև 10000 խմ-ի շրջանակում սպառում (բացառությամբ 1.1, 1.2, 1.4 և 1.5 կետերի)*	*180.42*	*135909.6 դր/հազ. խմ*	*180.42*	*139000.0 դր/հազ. խմ*
1.4	*Գյուղ. ոլորտում գործունեություն իրականացնող ջերմոցներ (նոյեմբերի 1-ից մինչև մարտի 31-ը)*	*73.48*	*283.14 $/հազ. խմ*	*73.48*	*224.0 $/հազ. խմ*
1.5	*Գյուղ. ոլորտում գործունեություն իրականացնող վերամշակող՝ պահածոների, խմիչքների եւ կաթնամթերքի արտադրությամբ զբաղվող, անձինք*	*34.26*	*283.14 $/հազ. խմ*	*34.26*	*224.0 $/հազ. խմ*
1.6	*Ամսական 10000 խմ-ը գերազանցող ծավալի շրջանակում սպառում (բացի 1.1, 1.2, 1.4 և 1.5 կետերի)*	*1114.92*	*283.14 $/հազ. խմ*	*1114.92*	*255.91 $/հազ. խմ*
2	***Բնական գազի վաճառքի միջին կշռութային սակագինը***		***283.14 $/հազ. խմ***		***266.71 $/հազ. խմ***

Սպառողներին վաճառվող բնական գազի միջին կշռութային սակագնի կառուցվածքը



Բնական գազի սակագնում գազամատակարարման համակարգի ՇՊԾ, մաշվածության եւ շահույթի կառուցվածքը



Գազամատակարարման համակարգում մատուցվող ծառայությունների՝ գործող, 2020թ. հայտով ներկայացված եւ ՀԾԿՀ-ի աշխատակազմի հաշվարկած սակագները (առանց ԱԱՀ-ի)

№	Անվանումներ	Չափի միավոր	Գործող սակագին	"Գազպրոմ Արմենիա" ՓԲԸ-ի հայտ	ՀԾԿՀ աշխատակազմի առաջարկ
1	Բնական գազի փոխադրման սակագին	*դրամ/ հազ. խմ*	9456.277	11068.907	7790.832
2	Գազամատակարարման համակարգի օպերատորի ծառայության մատուցման սակագինը	*դրամ/ հազ. խմ*	20.892	19.270	23.512
3	Բնական գազի բաշխման սակագինը	*դրամ/ հազ. խմ*	22455.908	18103.988	14248.314

Սպառողներին վաճառվող բնական գազի՝ գործող, 2020թ. հայտով ներկայացված եւ ՀԾԿՀ-ի աշխատակազմի հաշվարկած սակագները (ներառյալ ԱԱՀ-ն)

№	Անվանումներ	Չափի միավոր	Գործող սակագին	"Գազպրոմ Արմենիա" ՓԲԸ-ի հայտ	ՀԾԿՀ աշխատակազմի առաջարկ
1	Բնակչությանը (բացառությամբ սոցիալապես անապահով սպառողների՝ տարեկան մինչև 600 խմ բնական գազի սպառումը) վաճառվող բնական գազի համար	*դրամ/հազ. խմ*	139 000	135909.6	139 000
2	Սոցիալապես անապահով սպառողներին վաճառվող՝ տարեկան մինչև 600 խմ բնական գազի սպառման համար	*դրամ/հազ. խմ*	100 000	135909.6	100 000
3	Գյուղ. ոլորտում գործ. իրականացնող՝ ջերմոցներին (նոյեմբերի 1-ից մինչև մարտի 31-ը) եւ վերամշակող (պահածո, խմիչք և կաթնամթերք) անձանց վաճառվող բնական գազի համար	*$/հազ. խմ*	212.0	283.14	224.0
4	Ամսական մինչև 10000 խմ սպառողներին, բացառությամբ 1-3-րդ կետերով նախատեսվածի, վաճառվող բնական գազի համար	*դրամ/հազ. խմ*	139 000	135909.6	
5	Ամսական 10000 խմ եւ ավելի սպառում ունեցողներին, բացի 1-3-րդ կետերով նախատեսվածի, վաճառվող բնական գազի համար	*$/հազ. խմ*	242.1	283.14	
6	1-5-րդ կետերում չնշված մնացած սպառողներին (այդ թվում՝ ՋԷԿ-երին) վաճառվող բնական գազի համար՝ յուրաքանչյուր ամսում՝				
6.1	*մինչև 10000 խմ-ի շրջանակում սպառվող բնական գազի համար*	*դրամ/հազ. խմ*			139 000
6.2	*10000 խմ-ը գերազանցող բնական գազի համար*	*$/հազ. խմ*			255.91
	ՍՊԱՌՈՂՆԵՐԻՆ ՎԱՃԱՌՎՈՂ ԲՆԱԿԱՆ ԳԱԶԻ ՄԻՋԻՆ ԿՇՌՈՒԹԱՅԻՆ ՍԱԿԱԳԻՆ	*$/հազ. խմ*	**255.06**	**283.14**	**266.71**

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ